



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՇԱՓԱՌԻ ԿԱԹՈՂԵԿՈՍ
ՆՈՐԻՆ Ա. ՕՆՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ. Ա. Զ. Գ. Ե. Ա. Ա-Ի
ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍՈՍՀՄԱՆ ԵՎ ՎԵԲԱԴԱՐՁԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ա. ԷԶՄԻԱԾԻՆ

Ըմենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը Միջազգությանը հավական ացյալություն տալու և Կիլիկիայի կաթողիկոսական ընտրությանը մասնակցելու նպատակով 1956 թվականի փետրվարի 1-ին Ա. Էջմիածնից մեկնեց Մոսկվա, իսկ Մոսկվայից Փարիզ՝ փետրվարի 10-ին։ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Գերագոյն Հոգենոր Խորհրդի անդամներ գերաշնորհ Տ. Վարդան և պահապահ Անդրեյ Մարտիրոսյանը, Վեհափառ Հայրապետի զավագնակիր Տ. Պարգև արեգա Գևորգյանը և Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Անարքյանը։

Մոսկվայի Վենովով օդանավակայանում Վեհափառին և իր շքախմբին ճանապահութեցին Մայր Աթոռի միարանության, Մոսկվայում Հայաստանյաց Եկեղեցին հոգևորականության և Հավատացյաների ներկայացուցիչները։ Վեհափառ Հայրապետին ուղեկցութեանը մաղթելու համար օգնավակայացն էին Եկեղեցին նաև Մոսկվայի Ռուսաց Պատրիարքարանի ներկայացուցիչը, Պատրիարքարանի գործերի կառավարի Քայլությունների կառավարի Հայոց քահանա Ն. Ֆ. Կոլյացիկին, Մոսկվայում Անտիռքի վանատան վանահայր գերապատիլ Տ. Սերգիովութիւնի կաթոլիկոսը Վասիլին, ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Կրօնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահի

անդակար Գ. Ի. Գոստիկը և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ։ Հ. Գ. Գրիգորյանը։

Փետրվարի 10-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 8-ն անց 30 րոպեին Փարիզի Օրթի օդանավակայանը ժամանեց Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Վաղենին։

Վեհափառ Հյուրին դիմավորելու համար օդանավակայանում սպասում էին Արեմըտյան Եկեղեցի և Փարիզի Հայ ժողովրդի Հոգենոր առաջնորդ և Կաթողիկոսական պատվական գերաշնորհ Տ. Սերովին և պահապահ Մանուկյանը, Ռուս Օրթոդոքս Եկեղեցու, սովետական Հյուսատուարանի ներկայացուցիչները, Փարիզի Հայ Եկեղեցու վարչության և Հոգարաձության անդամները, Գաղթական գրասենյակի վարիչը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, Կարմիր Խաչի, Պարուսակը ամենանց միության և ուրիշ Հայ կազմակերպությունների, «Հատաշ», «Խթան» թերթերի ներկայացուցիչները և բազմաթիվ Հայեր։

Ողջույնից հետո Վեհափառը մեծ շքերթով օդանավակայանից մեկնեց Փարիզի Ա. Հովհաննես Մկրտչի Հայ Եկեղեցը և Եկեղեցում Հայ Հավատացյաների խուռն բազմության հետ ներկա էին զանազան կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնց թվում

Յրանսիրայի հայ կաթոլիկների առաջնորդ Տ. Կարապետ ծայրագույն վարդապետ Ամատոնին, Մոլքատ-Ռաֆայելյան վարժարանի տեսուչ Հ. Սերովի վարդապետ Ավագյանը, Ա. Խաչ և կեղեցու հոգարաբարձության անդամները, Արքախնամ միության և Փարիզի հայկական բոլոր կազմակերպությունների ներկայացուցչները: Վեհափառ Հայրապետի զարուստը ողջունեց Արևմտյան Եկեղակալի հայոց առաջնորդ Տ. Սերովի հայությունը:

Սերովի սրբազնի խոսքից հետո Վեհափառ Հայրապետը գոռունակություն հայտնեց Գրանսահայությանը և նրա բոլոր գործիչներին:

Փետրվարի 11-ին գիշերվա ժամը 11-ին

վը և պաշտոնական անձինք՝ կիրանանի Հանրապետության նախագահի արարողապետ պ. Ժորժ Հայմարին, Սովորական Միության կիրանանի ղետպան Ա. Պ. Կիկոնը, կիրանանի վարչապետի կողմից պ. Ֆերդի Հարիբը, Արտաքին գործերի մինիստրության կողմից պ. Ռոբեր Խըլլադ, փոստ-հեռագրական մինիստր պ. Քաղիմ Խալիլ, նախկին վարչապետ պ. Սամի Բեկ Սոլց, նախկին մինիստր պ. Ռաշիդ Բեյլուն, կոնսուլտանանի կառավարիչը, հայ եկեղեցականներից՝ Կիլիկիայի Կաթողիկոսական տեղապահ գերաշնորհ Տ. Խորեն հայությունը, Երևանի մի Պատրիարքական տեղապահ գերաշնորհ Տ. Եղիշե արքապետկոպոսը, Հալիպի ա-



ԲԱՐՁՐԱՀԱՅՈՐ ԺՈՂՈՎՐԴԻՒԹՅՈՒՆ ԹԵՅՐՈՒԹՅԻ ԿԱԼԵԳԻ ՄՐԱՆԱՎԱԿԱՑԱՆՈՒՄ ՄՎԱՍՈՒԻՇ է
ՎԵՀԱՓԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԺՈՂՈՎՐԴԱՆՅԻ

Վեհափառ Կաթողիկոսը Փարիզից մեկնեց Բեյրութ: Վեհափառ Հայրապետի շքախմբին միացան գերաշնորհ Տ. Սերովի հայությունը և Անթիլիասի միարանության անդամքարեշնորհ Տ. Արամակ վարդապետը:

Փետրվարի 12-ին ցերեկվա ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը հասավ Բեյրութ: Օղանավակայանում սպասող բազմահազար ժողովուրդը Վեհափառ Հայրապետին ցուց տվեց աննախընթաց և խանդավառ ընդունելություն: Այսադ Վեհափառ Հայրապետին ողջունում են ընդունելության հանձնաժողո-

ունորդ գերաշնորհ Տ. Ջարեհ հայուկուսը, Կիպրոսի առաջնորդ գերաշնորհ Տ. Գևոնդ հայությունը, Գամասկոսի թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերաշնորհ Տ. Շավարշ հայությունը, Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի նախկին առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրան արքապետկոպոսը, կարգինալ Աղաջանյանի կողմից գերապայծառ Սահակ և պիտիկոպոս Կողյանը, օրթոգորք պատրիարք գերապատիկ Սեմերիսը, հույն օրթոգորք պատրիարքի ներկայացուցիչները, կիրանանի Հանրապետու-

թյան մյուժափի ներկայացուցիչը և Գամբշ-
լիի առաջնորդական փոխագործ Տ. Տաճատ
ծալքապայն վարդապետը, Կիլիկիայի Կա-
թողիկոսության ղեկանապետ Տ. Շահն վար-
դապետը, Երևանի տարարանի տհուոչ
Տ. Զավեն վարդապետը, Հազեղնորդ Տ. Գնել
վարդապետը, Արտակ արեգան և արիշ արե-
գաններ ու բանաններ:

Արտասանվեցին ողջույնի խոսքեր, որոնց
հակիրճ պատասխանը տարուց հետո Վեհա-
փառ Հայրապետը օգնականակայանից առաջ-
նորդվեց զեպի Անթիկիաս, Մեծի Տանն Կի-
լիկիո Հայոց Կաթողիկոսարանը: Հայրապե-
տական շքերթին հետևում էին 2.000-ից


ցավ Կաթողիկոսարանից: Այս համբուլութը
անց էրկար ժամեր:

Այնուհետև տեղի ունեցան պաշտոնական
այցելություններ Վեհափառ Կաթողիկոսին:

Փետրվարի 13-ին ժամը 11-ին Վեհափառ
Հայրապետը այցելություն տվավ Լիբանանի
Հանրապետության նախագահ՝ պ. Քամիլ
Շամանին: Վեհափառ Կաթողիկոսը նախա-
գահական պարագաներում ընդունվեց զինվորա-
կան պատվիճակով:

Նույն օրը Վեհափառը այցելություն տվավ
Բեյրութի սովորական զիսդանին:

Նույն օրը Ամենայն Հայոց Վեհափառ
Կաթողիկոս Տ. Տ. Վաղգեն Ա-ի հետ ահասկ-



ՎԵՀԱՓԱԾՈՒՅԹ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՌԵՎՐՈՒԹԻՒՆ ԽԱՎԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԽԵՐԱՎՈՐԻՈՒԹ ԴԻՒՐԻ ԿԱՎԱԾ
ՕՐԾՈՒԹԻՄ Է ԺՈՐԾՈՒԹԻՒՆ

ավելի ինքնաշարժներ, ինչպես և բազմա-
թիվ հեծանվորդներ և մոռացիկատներ:

Վեհափառ Կաթողիկոսը բազմահազար
ժողովրդի սրբազնի ողջույնների և ցնծու-
յան աղաղակների տակ մոռավ Տաճար: Նո-
րին Վեհափառության զայտուտը շնորհավա-
րեց Կիլիկիայի Կաթողիկոսական տեղապահ՝
զերաշնորհ Տ. Խորեն Կափիկոպոսը: Վեհա-
փառ Հայրապետը շնորհավորական այս
խոսքին պատասխանեց օրնությամբ:

Վեհափառ Հայրապետի Աջը համբուրելով
բազմահազար ժողովուրդը զու՞ սրտով հնոա-

ցություն ունեցավ Լիբանանի Հայրապետու-
թյան արտաքին գործերի մինիստր պ. Անդրե-
լանուդը:

Նույն օրը երեկոյան ժամը 9-ն անց 30
րոպեին Անթիկիասի Կաթողիկոսարանում տե-
ղի ունեցավ եպիսկոպոսական խորհրդակ-
ցություն Վեհափառ Կաթողիկոսի նախագա-
հությամբ: Այդ խորհրդակցությանը մաս-
նակցում էին Մեծի Տաճա Կիլիկիո և Երու-
սաղիմի Աթոռների Տեղապահները, Երուսա-
ղիմից, Ամերիկայից, Եվրոպայից, Կիպրո-

սից Անթիլիաս ժամանած և պիտկոպուները, ինչպես և Անթիլիասի և պիտկոպուները,

Փետրվարի 14-ին առավոտյան ժամը 10-ին Անթիլիասի Կաթողիկոսարանի դահլիճում հավաքվեցին կաթողիկոսական ընտրության մասնակցող պատգամավորները։ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Վաղգեն Ա. Աղջուզի խոսք ուղղեց բոլորին և տվեց իր հայրապետական օրհնությունները։ Վեհափառ Հայրապետը մինչև Կահիրեակենը զբաղված էր պաշտոնական այցելություններով և ամեն օր ընդունում էր հաստակական կազմակերպությունների, դրա-

զաքական ժողովի ատենապետ պ. Հրանտ Նասիպյանի։

Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Սովետական Միության Կահիրեական դեսպանության ներկայացուցիչները, Ալեքսանդրիայի հայ գաղութի պատվիրակությունը գլխավորությամբ Ալեքսանդրիայի քաղաքական ժողովի ատենապետ պ. Մարտիկ Զարբհանալյանի, Հոգաբարձական մարմիններ, Ժամուկի ներկայացուցիչներ, Կահիրեայի հայ կազմակերպությունների և մշակութային ու այլ հաստատությունների անդամներ և ժողովրդի խուն բազմություն։



Ի ԳԱՏԻԿ ՎԵՀԱՓԱՌՈ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱԿԱՆ ԿԱՄԱՐ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

րոցական, եկեղեցական մարմինների և ժողովրդի խուն բազմության։

Փետրվարի 20-ին, առավոտյան ժամը 7-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբով մեկնեց Կահիրեա։ Առավոտյան ժամը 9-ն անց 56 րոպեին ինքնաթիւը վայրէցք կատարեց Կահիրեայի միջազգային օդանավակայանում։ Այսուեղ Վեհափառ Հյուրին սպասում էր Հինավորց մայրաքաղաքի հայրենակարություն հայոց բազմությունը գլխավորությամբ եղանակությունը հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Մամրիկ արքեպիսկոպոսը։ Վեհափառ Հայրապետը ողջունեց և օրհնեց ժողովրդին։

Բուռն ժափառությունների և խնդության բացագանչությունների տակ Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց դեպի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայ եկեղեցին։ Եքրմին մասնակցում էին հարյուրավոր ավատմերենաներ։ Տաճարում Վեհափառին ողջունեց Եփիպասի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Մամրիկ արքեպիսկոպոսը։ Վեհափառ Հայրապետը ողջունեց և օրհնեց ժողովրդին։

Փետրվարի 23-ին Վեհափառ Կաթողիկոսը այցելեց Գալուստյան և Նուպարյան աղքային վարժարապետները և ապա Կահիրեայի

մեկնեց Արքուանդրիա: Տեղի ունեցավ խանգամ ընդունելություն:

Փետրվարի 24-ին Վեհափառ Հայրապետը նախագահեց առավայրան «Արքապալ»-ի և երեկոյան «Եկեղեց»-ի արարողություններին և բարողեց ու օրհնեց Հավատացյալ ժողովրդին: Ի պատճի Վեհափառ Հայրապետի երեկոյան Սեսիիի արանում տեղի ունեցավ շրեղ ճաշկերպյամ Հասարակական կազմակերպությունների և նույն բարձրագույն պատճի ունեցավ Հայրապետի խոսքով:

Փետրվարի 25-ին առավատայան ժամը 8-ն անց 30 րապեին Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը Արքուանդրիայից ժամանեց Կաճիբեկ:

Փետրվարի 26-ին Կաճիբեկի հայոց Մայր

մանաւանը և նորակառուց մասունք և օրհնեց Սարայան ամսափնտերին, որոնց նվիրատվությամբ կառուցված է այդ սրբագրություն:

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Վաղգեն Ա. Փետրվարի 29-ին կեսօրվա ժամը 12-ն անց 15 րոպեին տեսակցության ունեցավ Եղիպատոսի Հանրապետության նախագահ պ. Կաճալ Արդել նասերի հետ:

Վեհափառ Հայրապետի հուսկրական կարգադրությամբ ժամը 2-ին Կաճիբեկ ժամանեցին Թյուրքիայի Հայոց պատրիարքը, Անթիիկասի, Երասաղեմի, Ամերիկայի և Եվրոպայի Հայ եպիսկոպոսները ժամանակցելու եպիսկոպոսական ժողովին:

Մարտի 4-ին, կիրակի, Կաճիբեկի հայոց եկեղեցում Վեհափառը ներկա եղավ սուրբ



ՎԵՀԱՓԱՆԻ ՀԱՅՐՈՊԵՏԸՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱԽՐԱՓԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Պ. ՔԱՅԻՆ ՇԱՄԱՆԻՔ
ՄՈՏ ԿԱՆԱՎԱՐԱԿԱՆ ՊԱԼԱՏՈՒՄ ՇՐՋԱԳԱՍՏԱՄ ԻՐ ՇՐԱԿԵՐԳԱՎ

Եկեղեցում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և բարողեց Վեհափառ Կաթողիկոսը: Կեսօրից հետո ժամը 6-ին Վեհափառը նախագահեց Հայկական Բարեկործական Հնդհանուր Միոնիշյան շքեղ թեյանգանին, որը նվիրված էր Արևոտներեք վետերան անդամների վկայականների հանդիսավոր բաշխմանը: Վերջում խոսք առավ Վեհափառը և օրհնեց բոյարին:

Փետրվարի 28-ին նորին Ա. Օծությունը տրցելեց Արքուանդրիայի հայոց նոր գերեզ-

պատարագին: Քարոզեց պատրիարք ամենապատիլ Տ. Գարեգին արքեպիսկոպոսը:

Մարտի 5-ին առավոտյան ժամը 12-ին Կաճիբեկի հայոց առաջնորդարանի մեջ զանիթնում բացվեց եպիսկոպոսական ժողովը, որ ունեցավ ութ նիստ և տևեց մարտի 5-ից մինչև 8-ը: Ժողովին նախագահում էր Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Վաղգեն Ա. Մասնակցեցին Թյուրքիայի Հայոց ամենապատիլ պատրիարք Տ. Գարեգին արքեպիսկոպոս եպաշտրյանը. Մեծի

Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռի տեղապահ գերաշնորհ Տ. Խորեն եպիսկոպոս Բարոյանը, Երուաղեմի Հայոց Պատրիարքական տեղապահ գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության նախկին տեղապահ գերաշնորհ Տ. Խաղ արքեպիսկոպոս Աջապահյանը, Եփիպտոսի Հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրի արքեպիսկոպոս Միրոնյանը, Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրի արքեպիսկոպոս Գալֆայանը, Երուաղեմի Առաքելական Աթոռի եպիսկոպոսներից գերաշնորհ Տ. Սուրեն եպիսկոպոս Քեմբաճյանը, գերաշնորհ Տ. Հայլազուն և

պատվիրակ գերաշնորհ Տ. Մերովք եպիսկոպոս Մանուկյանը, Վրաստանի Հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Մահմակյանը, Կալիֆորնիայի Հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Շնորհք եպիսկոպոս Գալստյանը ժողովի ատենապետ նշանակվեց գերաշնորհ Տ. Շնորհք եպիսկոպոսը:

Մարտի 9-ին եպիսկոպոսական ժողովն ավարտեց իր աշխատանքները և եպիսկոպոսները Կահիրեկից մեկնեցին իրենց պաշտոնավայրերը:

Մարտի 11-ին և 12-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ գերաշնորհ Տ. Տ. Խաղ և Մամբրի արքեպիսկոպոսների, Դեմքնիկ եպիսկոպոսի, բարեշնորհ Տ. Հմայակ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԵԿՆՈՒՄ Է ԲԵՅՐՈՒԹԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀՅՈՒԹԱՏԾՈՍԱՐԱՆԻՑ

պիսկոպոս Արքահամբյանը, գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Վրթանեսյանը և գերաշնորհ Տ. Հայրիկ եպիսկոպոս Ալյոնյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության եպիսկոպոսներից Դարեվանքի տեսուչ գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը, Դամակոսի եպիսկոպոս Գիրակոսի թեմի Կաթողիկոսական պատվիրակ գերաշնորհ Տ. Շավարշ եպիսկոպոս Գուշումճյանը, Կիպրոսի առաջնորդ գերաշնորհ Տ. Ղեոնիկ եպիսկոպոս Զեպեյանը, Արևելյան Ելքոպայի Հայրապետական

վարդապետի, այցելեց Լուքորի եպիսկոպոսական հնությունները և փարավոնների դամբարանները:

Մարտի 14-ին Վեհափառը նախագահեց Արևելագության արարողության և քարոզեց:

Մարտի 18-ին Վեհափառ Հայրապետը Կահիրեկից մեկնեց Հոռոմ: Օդանավակայանում նորին Վեհափառությանը ողջերթ մաղթեց հոգևորականությունը և ժողովովի խուռան բազմությունը: Հոռմի օգանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին

Հոսմում Սովետական Միության գեղազնության ներկայացուցիչները, ինչպես և Միլանոյի հայ համայնքի ներկայացուցիչները՝ պ. պ. Օրվանդ Հյուսիսյան, Եղիշյան և Արեւադյան:

Մարտի 22-ին Վեհափառ Հայրապետը շրաբնարով մեկնեց զեպի Միլան քաղաքը: Ծղանավակայանում նորին Վեհափառության ուր զիմանակը տեղական հայ զաղութի ներկայացուցիչները մեծ խումբ, ինչպես և Վեհափառի Ս. Զավար կղզու հայ Միլիթարյան միարանության ներկայացուցիչ Հայր Եղիա Բեճիկյանը, որը Վենետիկից մեկնել էր Հայուկ այդ նպատակի համար:

Մարտի 24-ին տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ ի պատճի Նորին Վեհափառություն Ամենամի Հայոց Կաթողիկոսի ճաշկերույթը կազմակերպել էին Միլանության կազմական բոլոր կազմակերպությունների վարչական հայրապետին ուղղույնի ջերմ խոսք ասացին վարչությունների ներկայացուցիչները, որոնց պատասխանեց Վեհափառ Հայրապետը:

Մարտի 25-ին Վեհափառ Կաթողիկոսը իր շրաբնարով և ընկերակցությամբ պ. Օրվանդ Հյուսիսյանի այցելեց Կոմո քաղաքը և մի քանի ժամ հյուր եղավ հայ ազգային բարերար պ. Օննիկ Մանուկյանի ընտանեկան



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՇԵՐԵՈՒՄ.

ՉՈՆԻՑ ԹՅՈՒՐԵԻԱՅԻ ՀԱՅՈՅ ԳԱՍՏԻՎԱՐՔ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐԵՎՈՒՄԿՈՎՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ,
ԱՐԻՑ ԵԿԻՎՏԱՀԱՅԵՐԻ ԱՌԱՋԱԿԱՐԴ Տ. ՄԱՐՏՐԵ ԱՐԵՎՈՒՄԿՈՎՈՍ ՄԻՐՈՒՅՅԱՆ:

Մարտի 23-ին Վեհափառ Կաթողիկոսն ընդունեց Միլանի հայ զաղութի կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ եկեղեցական հոգարարձուներին, ներկայացուցիչներին՝ ներկայական միությանը, տիկնանց բարեսիրական միությանը, մշակութային միությանը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը և «Հայ տուն»-ի վարչության ու երիտասարդական միության ներկայացուցիչներին:

Հարկի տակ: Երեկոյան Վեհափառ Հայրապետը ներկա եղավ թյասեղանին, որ կազմակերպել էր Միլանոյի հայ ամբողջ զաղութի: Արտասանվեցին ողջույնի սրտառուց խոսքեր, որոնց պատասխանեց Վեհափառ Հայրապետը ծանոթացնելով Հայ եկեղեցու և Մայր Աթոռի կեցության հետ:

Մարտի 26-ին Վեհափառ Հայրապետը ժամանեց Վենետիկ: Նորին Վեհափառությա-


նը Հանդիսավոր ընդունելություն ցույց տվին Ս. Ղազարի Մխիթարյան միաբանության ներկայացուցիչները՝ հայր Եղիշ Թեմիկյան, հայր Մահմակ Տեր-Մովսեսյան և հայր Ներսես Տեր-Մովսեսյան: Նույն օրը Նորին Վեհափառությունը այցելեց Ս. Ղազարի Մխիթարյան միաբանությանը: Վեհափառ Կաթողիկոսին ընդունեց վանքի ամբողջ միաբանությունը գլխավորությամբ միաբանության ընդհանուր արքանոր տեղակալի: Տեղի ունեցավ Հանդիսավոր ճաշկերույթ, որի ժամանակ ողջույնի խոսք ասացին միաբանության անդամները: Վեհափառ Հայրապետը

բարիս վարժարանի աշակերտության: Վեհափառ Հայրապետը երեկոյան մեկնեց Միանու:

Մարտի 28-ին Վեհափառ Հայրապետին այցելեցին Միանոյի գաղութի ներկայացուցիչները, որոնց մեջ մեծանուն հայ նկարիչ Շիլթյանը:

Մարտի 29-ին Նորին Վեհափառությունը մեկնեց Փարիզ: Օդանավակայանում դիմավորեց խուն բազմություն: Վեհափառ Հայրապետը ի պատասխան ժողովրդի ողջույնի օրնեց բազմությանը:

Մարտի 30-ին Վեհափառ Հայրապետը



ՎԵՀԱՓԱԾ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԾՐՁԱԳԱՏՎԱԾՈՒ ՄԻԱՆՈՒՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԲՈՒԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒՅՆԵՐԻՎ

պատասխան խոսքի մեջ գոհունակություն հայտնեց ջերմ զգացմունքների ու բաղձանքների նկատմամբ:

Մարտի 27-ին Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսն այցելեց Մուլատ-Մաֆայելյան վարժարանը. տեղի ունեցավ պատշաճ ընդունելություն վարժարանի վարչության կողմից, և ի պատիվ Վեհափառ հյուրի տրվեց Հանդիսավոր ճաշկերույթ, որի ընթացքում ուղղվեցին ավուր պատշաճի ճառեր, որոնց պատասխանեց Վեհափառ Կաթողիկոսը ազգությունը խոսքով, իր խոսքն ուղղելով մասնավո-

նախագահեց Ավագ ուրբաթի թաղման Հանդիսավոր արարողություններին: Ծարաթ երեկո Ճրագալույցին պատարագիչն էր Վեհափառ Հայրապետի գալազանակիր բարեշնորհ Տ. Պարզե արեղա Գևորգյանը: Պատարագի ընթացքում քարոզեց Փարիզի առաջնորդ և Արևմտյան Եվրոպայի հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սերովիկ հպիսկոպոս Մանուկյանը:

Ապրիլի 1-ին, Ս. Զատկի օրը, տեղի ունեցավ Հանդիսավոր պատարագ: Պատարագը մատուցեց Վեհափառ Հայրապետը Պա-

ապրագին ներկա էր շաբք 3.000 հոգուց բաղկացած խուռն բազմության երգում էր երգչախումբը զեկավարությամբ պ. Արտ Փարթևյանի: Պատարապից հետո ոչ ճագովորդը համբուղեց Վեհափառ Հայրապետի Աջոյ Աջահամբուլը անեց երկար:

Ապրիլի 3-ին Վեհափառ Հայրապետը իր շրաբնարով և ուղեկցությամբ զերաշնորհ Տ. Մերովի և ապահովությամբ ազգային-եկեղեցական իշխանության զեկավարների այցելեց անձանոթ զինվորի զերեզմանին: Խուռն բազմության և Փարփակի զինվորական վարչության ներկայությամբ նորին Վեհափառու-

յոց եկեղեցում: Վեհափառ Հայրապետը բարող խոսից խուռն բազմության ներկայությամբ:

Ապրիլի 5-ին ցերեկվա ժամը 1-ին աեղի ունեցավ բնդուներություն և ճաշկերույթ, որի պատիվ Վեհափառ Հայրապետի կազմակերպեց Հայկական Բարեկործական Ընդհանուր Միությունը: Վեհափառ Կաթողիկոս Հանդիսավոր խոսքի մեջ վեր հանեց Հայկական Բարեկործական Ընդհանուր Միության պազուատ զործունեությունը: Նույն օրը, ժամը 5-ն անց 30 րոպեին Վեհափառին ընդունեց Ֆրանսիական Հանրապետու-



ՎԵՀԱՓԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԵՆԵՏԻԿԻ ՄՈՒՐԱՏ-ՌԱԶԱՅԵԼՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԳԱՍՏԱՊԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԵՏ

թյունը պսակ դրեց անձանոթ զինվորի զերեզմանին: Հանդեսին ներկա էին և Վեհափառ Հայրապետին ողջունեցին Փարփակի զինվորական հրամանատարը և բաղարապետության ներկայացուցիչը: Վեհափառին տրը վեցին զինվորական պատիվներ:

Ապրիլի 4-ին Վեհափառ Կաթողիկոսը Փարփակի հայոց առաջնորդաբանում ընդունեց թերթերի թղթակիցներին ու զանազան հիմնարկությունների ներկայացուցիչներին: Նույն օրը երեկոյան ժամը 8-ին տեղի ունեցավ եկեղեցական արարողություն Ալֆորդիլի հա-

թյան Արտաքին Գործերի՝ Մինիստրը պ. Թրիստիան Պինոն: Երեկոյան ժամը 9-ին տեղի ունեցավ Հանդիսավոր ճաշկերույթ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Ճաշկերույթին, որ կազմակերպել էին Փարփակի հայեկեղեցական կազմակերպությունները, ներկա էր 500 հոգի: Վեհափառ Հայրապետը ունեցավ կարևոր և գեղեցիկ նյույթ, որ տեղեց մեկ ժամ:

Ապրիլի 6-ին, ցերեկվա ժամը 11-ին տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն Հայկական թանգարանում ի պատիվ Վե-

Համար Կաթողիկոսի: Ընդունելությանը ներկա էին Սովետական Միության Փարիզում դեսպան պ. Վինոգրադովը, Ֆրանսիական կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներ և օտար պետությունների դեսպանների Ողջույնի խոսք ասացին պ. պ. Նուրհան Ֆրենկլյանը և փաստաբան Հակոբյանը: Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց ներկա գտնվողներին և խոսեց ֆրանս-հայկական կուտարական կապերի մասին: Կեսօրից հետո Վեհափառն այցելեց Վերսալի պալատը:

Մեղի ունեցավ Հանդիսավոր սուրբ պատարագ ներկայությամբ բազմահազար ժողովրդի: Պատարագեց և բարոգեց Վեհափառ Հայրապետը: Երգչախմբին ղեկավարում էր պ. Վարդան Սարգսյանը: Ժամը 3-ին կազմակերպվեց ճաշկերույթ ի պատիվ Նորին Սրբություն Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի: Սրբածանվեցին ողջույնի ճառիք ուղղված Վեհափառ Հայրապետին, որն իր պատասխան խոսքով օրհնեց բոլոր ներկաներին:

Ապրիլի 9-ին Վեհափառ Կաթողիկոսը ըն-



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԵՆԵՏԻՆԻ ՄՈՒՐԱՏ-ԹԱԳԱՅԵԼՅԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ապրիլի 7-ին նորին Վեհափառությունը Փարիզից մեկնեց Մարսել: Օդանավակայացանում տեղի ունեցավ խանդավառ դիմավորություն Վեհափառ Հյուրին: Վեհափառ Հայրապետը խուս բազմության ուղեկցությամբ ժամանեց Մարսելի հայոց եկեղեցին, որտեղ սպասում էր Հոծ բազմություն: Տեղի ունեցավ հանդիսավոր ժամերգություն, որից հետո ժողովուրդը համբուրգից Վեհափառ Կաթողիկոսի Աջը: Կեսօրից հետո նորին Վեհափառություն Ամենայն Հայոց Կաթողիկոսը ժաղկեպակ գրեց Մարսելի հերոսների հուշարձանին:

Ապրիլի 8-ին Պրադոյի հայոց եկեղեցում

դունեց Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին և ժողովրդին: Երեկոյան ժամը 9-ին տեղի ունեցավ Հանդիսավոր հավաքույթ, որ կազմակերպել էր Հայկական Բարեգործական Բնդշանության Միությունը: Հավաքույթին ներկա էին նաև Մարսելի նահանգապետը, Կաթողիկ Եկեղեցու Մարսելի արքապիսկոպոսը, ինչպես և բազարապետը: Սրբածանված ողջույնի ճառիքին պատասխանեց Վեհափառ Հայրապետը:

Ապրիլի 10-ին նորին Ա. Օծությանը գնացրով մեկնեց գետի կողի բազարը: Ճանապարհին, Վալանսի կայարանում հայ զա-



Հայոց պատրիարքական կաթողիկոս և հայոց առաջնորդ Տիգրան Տիգրանյանը և առաջնորդ Կառլ Արքանը առաջնորդությամբ առաջարկելու ժամանակ

գութը ցուց տվեց Վեհափառ Հովկապետին խանդավառ դիմավորություն։ Ժամը 4-ին Վեհափառ Հայրապետը հասավ Լիոն քաղաքը, այցելեց Հայոց ջին և կեղեցին և նոր կառուցվող եկեղեցին։ Այնուհետև Վեհափառ Հայրապետը մասնավոր մեքենայով ուղևորվեց դեպի մոտակա Դեսին քաղաքը, որտեղ ապրող մեծ թվով հայությունն սպասում էր եկեղեցում։ Տեղի ունեցավ եկեղեցական արարողություն։ Երեկոյան ժամը 9-ին Լիոնի մեծագույն դահլիճում 5.000 հոգուց բազկացած բազմության առաջ խոսեց Վեհափառ Հայրապետը։

Ապրիլի 11-ին Վեհափառ ժամանեց Փարիզ, իսկ 12-ին Փարիզից օդանավով հասավ Լոնդոն։ Լոնդոնի օդանավակայանում նորին Վեհափառությանը դիմավորեցին Սովետական դեսպանության ներկայացուցիչը, Լոնդոնի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պատակ եպիսկոպոս Թումայանը, Քենտրոներին արքեպիսկոպոսի ներկայացուցիչ լոնդոնի անդիկան եպիսկոպոսը, լոնդոնի հայ գաղութի ներկայացուցիչները՝ Պ. Սարգսի Քյուրքճյանը և ուրիշները, ուստահան պրավուլավ, հունական և մալարար հոգևորականության ներկայացուցիչները և ժողովորդը, Վեհափառ Կաթողիկոսն առաջնորդվեց եկեղեցի, որտեղ եկեղեցական կարճատե արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը դիմեց ժողովորդին ողջունի և օրհնության խոսքով։ Ժամը 7-ն անց 30 րոպեին Վեհափառ Կաթողիկոսը ուղեկցությամբ գերաշնորհ Տ. Տ. Սերովին և Պատակ եպիսկոպոսների, բարեշնորհ Տ. Պարգև արեղայի և դիվանապետ պ. Հայկ Առաքելյանի առաջնորդվեց Լամբեթ պալատ, այստեղ նորին Վեհափառությանն ընդունեց Քենտրոների արքեպիսկոպոս Զենքֆրի Ֆիշերը։ Վեհափառ Հայրապետը Լամբեթ պալատում մնաց 4 օր որպես Քենտրոների արքեպիսկոպոսի անձնական հյուրը։

Ապրիլի 13-ին Վեհափառ Հայրապետը հատուկ տեսակցություն ունեցավ պ. Նուպար Կյուպանկյանի հետ։ Կյուրից հետո լամբեթ պալատում մասնավոր տեսակցություն ունեցավ Զենքստրի անդիկան եպիսկոպոսի հետ, իսկ ժամը 5-ն անց 30 րոպեին նույն պալատում տեղի ունեցավ մեծ ընդունելություն ի պատիվ Վեհափառ Կաթողիկոսի։ Ընդունելությունը կազմակերպել էին Քենտրոների արքեպիսկոպոսը և նրա կողման կամաց մասնակի կողմանը, ուստար եկեղեցիների ներկայացույներ, եպիսկոպոսներ և այլ բարձրաստի-

ճան հոգեկորականներ։ Ավուր պատշաճի խոսք ասացին Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը և Քենտրոների արքեպիսկոպոսը ժամը 6-ն անց 30 րոպեին Ս. Գրոց ընկերության պալատի մեջ տեղի ունեցավ ընդունելություն և ճաշկերույթ ի պատիվ Վեհափառ Կաթողիկոսի։ Ողջույնի խոսք ասաց նախագահ Էդվարդ Կարլը։ Պատասխան ճառով հանդիս եկավ Վեհափառ Հայրապետը։

Ապրիլի 14-ին Վեհափառ Կաթողիկոսը այցելեց Նաշդում վանքը, որ գտնվում է Լոնդոնից մեկ ժամ հեռավորության վրա։ Վեհափառ Հայրապետին ընդունեց Լանկաստրի եպիսկոպոսը։ Ժամը 5-ին տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի Լոնդոնի Ուստամինիստրի Մայր Տաճարում։ Հանդիսավոր խոսք ասացին Վեհափառ Կաթողիկոսը և Մայր Տաճարի եպիսկոպոսը։ Արարողությունը վերջացավ Վեհափառ Կաթողիկոսը և Մայր Տաճարի պատվագանի Վեհափառ Հայրապետի «Պահպանից»-ով։

Ապրիլի 15-ին Լոնդոնի հայոց եկեղեցում տեղի ունեցավ հանդիսավոր պատարագ։ Պատարագեց և քարոզեց Վեհափառ Կաթողիկոսը։ Պատարագին ներկա էր իր շքանձորվ Քենտրոների արքեպիսկոպոսը։ Այդ դիշեր Լամբեթի պալատում տեղի ունեցավ փարիզահայ հայտնի երաժիշտ Պ. Ռաֆֆի Պետրոսյանի դաշնամուրի համերգը։

Ապրիլի 17-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնապես այցելեց Սովետական Միության դեսպան պ. Մալիկին։

Ապրիլի 18-ին Վեհափառ Կաթողիկոսը շքամմրով այցելեց Քենտրոների Մայր Տաճարը, որ գտնվում է Լոնդոնից երեք ժամ հեռավորության վրա։ Նորին Վեհափառության ընդունեց Մայր Տաճարի ավագիրից Հյուկետ Զննունը։ Տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի։ Ճապեր փոխանակեցին Վեհափառ Հայրապետը և ավագիրից Հյուկետ Զննունը։

Ապրիլի 19-ի երեկոյան Քենդինկտոն մեծ դահլիճում տեղի ունեցավ ճաշկերույթ ի պատիվ Վեհափառ Կաթողիկոսի։ Ճաշկերույթը կազմակերպեց Լոնդոնի հայ գաղութը գլխավորությամբ պ. Նուպար Կյուպանկյանի։

Ապրիլի 20-ին Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին այցելեցին բազմաթիվ պատվիրակություններ և Հյուրեր։ Տեղի ունեցավ Արքարյան հիմնադրամի վարչության ժողովը։

Ապրիլի 21-ին Վեհափառ Հայրապետը մեկնեց Մանչեստր։

Ապրիլի 22-ին Վեհափառ Կաթողիկոսը հանդիսավոր պատարագ մատուցեց Հայոց



զիշտութեան ամսութեան կարգը Պ. Ալեքսանդր Կամաց առաջին ամսութեան վեհականութեան մասին պատճեան է:


եկեղեցում: Կեսօրին տեղի ունեցավ մեծ ճաշկերութիւն պատիվ Վեհափառ Հայրապետի՝ կազմակերպված հայ եկեղեցական խորհրդի և ամբողջ գաղութիւնութիւնը պատվորութիւնը պ. Մարտի Պարքը հայանի և պ. Ներսես Կյուլպեհնեցի: Առաջարկվեցին բազմաթիվ բաժականաւեր, որոնց պատասխանով հանդիս էլեավ Վեհափառ Կաթողիկոսը:

Ապրիլի 23-ին Վեհափառ Հայրապետը վերադարձավ Լոնդոն:

Ապրիլի 25-ին նորին Վեհափառությունը ինքնաթիւով մեկնեց Լոնդոնից Փարիզ: Օգանակայանում Վեհափառ Հայրապետի ող-

Ապրիլի 26-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Պառու նուպարի կառուցած տունը հայ ուսանողության համար: Հայ ուսանողությունը ցոյց տվեց խանգավառ ընդունելություն, արտասանվեցին ողջույնի չերմ ճառուր, որոնց պատասխանեց Վեհափառ Կաթողիկոսը: Ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը ցոյց տվեց պարոցականների հետ, իսկ երեկոյան տեղի ունեցավ խորհրդակցություն եկեղեցական թիմական վարչությունների հետ:

Ապրիլի 27-ին Վեհափառ Կաթողիկոսը այցելեց Պարոցասեր հայ տիկնանց միու-



ՎԵՀԱՓԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ ՄԱՂԱԿԱՍԱԿ Է ԴՆՈՒՄ ԱՆՄԱՆԹ ՋԻՆՎՈՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ

չերթին ներկա եղան Սովետական դեսպանության ներկայացուցիչները, Քենտրոնի պարբեսկոպոսի ներկայացուցիչը, պ. Նուպար Կյուլպեհնեցինը և ազգային մարմինների ղեկավարներ ու ներկայացուցիչներ: Մեկնելուց առաջ Վեհափառ Հայրապետը իր գոհունակությունը հայտնեց և օրհնեց ներկա դանվող հասարակության: Երեկոյան ժամը 5-ին Վեհափառը հասավ Փարիզ:

Թյան աղջկանց վարժարանը և ցոյցեց զբարոցականների հետ: Ժամը 4-ին նորին Վեհափառությունը այցելեց Մաթիթարյանների Մուրատ-Ռաֆայելյան վարժարանը, որ զբներվում է Ակրում: Տեղի ունեցավ խանգավառ ընդունելություն և հանդիս:

Ապրիլի 28-ին Վեհափառ Հայրապետն ընդունեց Փարիզի հայ բժիշկների պատվիրակությանը: Վեհափառը կեսօրից հետո

այցելեց Փարիզի Հայկական երկու ծերտ-նոցները:

Ապրիլի 29-ին Վեհափառ Կաթողիկոսը ներկա հղավ Առնուլֆիի Հայ եկեղեցու պատարագին և քարոզեց: Փարիզահայ տիկ-

Մայիսի 1-ին Վեհափառ Հայրապետն ընդունեց բազմաթիվ այցելուներու:

Մայիսի 3-ին Ժամը 6-ին Վեհափառ Կաթողիկոսն այցելեց Ֆրանսիական Հանրապետության նախագահ: Արքնե Կոտիին:



Վեհափառ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՔԵՆՏՐԵՐԵԲԻ ԱՐԵՎՈՒՆՈՎՈՍՐ ԱՄԳՀՅԱՆՈՒ ՏԱԿ
ԱՌԱՋՆՈՐԴՎՈՒՄ ԵՆ ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՅԻՆ:

նանց միությունը ի պատիվ Վեհափառ Հայ-րապետի կազմակերպեց թեյասեղան:

Ապրիլի 30-ին Փարիզի Ռոբախնամ տիկ-նանց միությունը ի պատիվ Վեհափառ Հայ-րապետի կազմակերպեց թեյասեղան:

Մայիսի 3-ին Փարիզի Հայ մշակութային միությունը կազմակերպեց թեյասեղան ի

պատիվ Վեհափառ Կաթողիկոսի: Նույն օրը երեկոյան ժամը 9-ին Փարիզի Հայոց առաջնորդարանում տեղի ունեցավ հանդիպում

Հայ գրողների և մամուլի աշխատակիցների հետ:

Մայիսի 4-ին Վեհափառ Կաթողիկոսն այցելեց Լուվրի թանգարանը: Երեկոյան առաջնորդաբանում տեղի ունեցավ թեյասելան Վեհափառ Հայրապետի մեկնումի առթիվ:

Մայիսի 5-ին առավոայան ժամը 9-ին Վեհափառ Հայրապետը Օրիի օգանակակայանում հրաժեշտի խոսք ասելով օրհնեց Փարփփի Հայ գաղութի ներկայացուցիչներին, որոնք եկել էին ողջիրթ մաղթելու նորին Վեհափառության, և մեկնեց Մոսկվա:

Նույն օրը գիշերվա ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը հասավ Մոսկվայի Վնուկովո օգանակայանը: Վեհափառ Կաթողիկոսին դիմովորեցին ՍՍՌ Միության Մինիստրների Սովետին կից Կրոնական պաշտամունքների կողմիտեի նախագահի տեղակալ պ. Գոստեր, գերաշնորհ Տ. Մահակ եպիսկոպոսը, բարեհնորհ Տ. Մեսրոպ Արեգան, Տ. Խաչատուր Քահանան և բազմաթիվ հայատացյալներ:

Մայիսի 6-ին Վեհափառ Կաթողիկոսը ներկա եղավ Մոսկվայի Հայոց նորաբաց եկեղեցում մասուցված պատարագին և քարոզեց ներկա խուռն բաղմության:

Մայիսի 7-ին Վեհափառ Հայրապետը այցելեց ՍՍՌ Միության Մինիստրների Սովետին կից Կրոնական պաշտամունքների կողմիտեի նախագահ պ. Ի. Վ. Պոլյանսկովն:



Ամենայն Հայոց Շայրագույն Պատրիարք և Կաթողիկոս նորին Ա. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Երեքամյա ուղևորությունից հետո մայիսի 19-ին վերաբարձավ Մայր Աթոռ:

Վեհափառ Հայրապետին արժանավայել կերպով դիմավորելու համար Երևանի երկաթուղային կայարանն էր փութացել բազմազար ժողովուրդ: Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Ա. Էջմիածնի Գերագույն Հոգենորդ Խորհրդի ամսամները, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի անդամները, Հոգեվոր Ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի ողջ միաբանությունը և պաշտոնաթյունը, մայրաքաղաքի եկեղեցական խորհուրդները, քահանայական դասը, մամուլի ներկայացուցիչները, թղթակիցները, հասարակական գործիչները:

Հետմիջօրեի ժամը 4-ն անց 40 րոպեին ժամանում է գնացքը Երևանի կայարան: Ալեկոծվում է ժողովրդական բազմությունը, բոլորի գեմքին ժամիտ է, ուրախություն և բարձր տրամադրություն:

Եվ ահա Վեհափառը...: Թնդում է ծափակարությունների ուրախ որոտը, մինչ գնացքի լուսարաց պատուանից Վեհափառը օրհնում է բոլորին: Գոհունակություն և ուրախություն կա նրա բարի աշքերում: Նա վերադառնում է Մայր Հայրենիք, Մայր Աթոռ ուրախ, դռնունակ և լավատես: Նրա սրա մեջ բարախում է ողջ Հայության սիրաբը:

Գնացքից Վեհափառի հետ իշնում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախադաշտը. Հրացյա Գրիգորյանը:

Գերագույն Հոգենորդի Խորհրդի անդամների գլխավորությամբ պաշտոնական դիմավորությունների խումբը եկեղեցական ամբողջ դասի հետ մոտենում է Վեհափառին ի համբույրը նրա Ա. Աջոյն:

Խանդավառ ուրախության և ցնծության մեջ, ծափահարությունների, ծաղիկների և ժպիտների տակ Վեհափառը Հանդիսավորական պաշտոնական ընդունելության դաշտը, որտեղ Գերագույն Հոգենորդի Խորհրդի, միարանության, Հոգեվոր Ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության անունից միաբանության երիցագույն անդամ գերաշնորհ Տ. Վահան արքապիսկոպոս Կոստանդնուպոլիս սրբագին ողջունում է Վեհափառ Հայրապետին հետեւյալ ճառով.

«Ծնորհաղարդ Ա. Հայրապետ:

Երեքամյա տքնաշան ձանապարհորդությունից հետո այսօր ողջամբ վերադարձաք Հայության սիրահ՝ Մայր Աթոռ Ա. Էջմիածնի: Բուլլ ավելի, Վեհափառ Հոգենորդ Խորհրդի, միարանական եղբայրներիս, Հոգեվոր Ճեմարանի ուսանողության, դասախոսական կազմի և Մայր Աթոռի ողջ աշխատավորության և անձամբ իմ կողմից խորին բերգրանքով շնորհալորել Սրբությանդ շնորհաբեր վերադարձը, որին սրտաբրու և ակնդետ սպասում էինք բոլորս, ինչպես և հավատացյալները:

Հավատում ենք, որ Ա. Օծությանդ այցելությամբ Սփյուռքի Հայությունը, որը դարերով բախտ չէր ունեցել տեսնելու իր եկեղեցու սիրեցյալ Հոգեվաբետին՝ Հայոց Ընդհանուրական Հայրապետին, բախտ ունեցավ դարերի երազը իրականացած տիսնել: Հայրենաբարդ, Էջմիածնի կարուց սրտին սեղմած, դարերի մշտւի

մեջ կյանքը մաշած, օտար հորիզոններում՝ գաղթաշխարհում զեզերով հայք տեսչացել է Ազգի բնարյալին ահանկի, նրա շնորհարաշխ օձյալ Ս. Աջը համբուրել, նրա օրնության ստանալ, նրա համեմաշխատթյան, միասնության խրախուսիչ ու հուժկու սիրո խորը լսել: Այսօր այդ եռ իրականացավ:

Զեր հովհական այցով, այսօր ավելի քանի երրեք, ամբափնդից Մայր Հայրենիքի, Ս. Եջմիածնի և Սփյուռքի հայոթյան սերտ կապը, համագործակցությունը և փոխըմբռնումը:

Թյանդ ծրագրած բոլոր աշխատանքները, Զեր խակ վերին հակովությամբ և անմիջական մասնակցությամբ, մոռ ապագայում իրագործված տեսներ:

«Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող», Ս. Գրիգոր Լուսավորչի Գահակալի Տ. Տ. Վազգեն Ա-ի օծյալ ձեռքով պայծառացրու մեր Ս. Եջմիածնիր: Պայծառացրու նաև մեր նորապսակ Հայրապետի կյանքի ու իշխանական գավագանը, որպեսի իր գահակալության ժամանակաշրջանում Մայր Աթոռ Ս. Եջմիածնում Ե՛լ ավելի ծաղկի ու բարգավաճի հայ զիրն ու



ԱՅՀԱՓՈՐ ՀԱՅՐԱՎԵՏԸ ԵՐԵՎԱՆԻ ԿԱՆԱՐԵԱՆՈՒՅԻՆ

Վեհափառությանդ հայրական այցը գաղութահայության մեջ ամբանդեց հավատ և սեր զետի Միաձեռակ Լուսո խորան Ս. Եջմիածնին ու նրա արժանաբնտիր Գահակալը:

Սրբազնակատար Ս. Հայրապետ:

Մշտամոռն աղոթելով Վեհիդ երկարակեցության և առողջության համար մաղթում ննի, որպեսզի Մայր Աթոռի վերաշինման, բարեկարգման, Հոգեոր ծեմարանի ուսման մակարդակի բարձրացման ու կրօնաբարոյական ասպարեզում Սրբու-

գրականությունը, գիտությունն ու արվեստը և դպրությունը:

Վեհափառ տե՛ր:

Գոշելով Մեսրոպ Թաղիաղյանի Հայրապետական օրհներգից «Զերկարութիւն կենաց Հօրն մեր աստուածազգեաց, Շնորհեա Պետին մեր հարց որ զմեղ հովուէ...» հիասքանչ ու հոգեպարար խոսքերը թույլ տվեթ հավասարել բոլորին անալլայլ սերն ու նվիրվածությունը հանդեպ լուսակերտ Ս. Եջմիածնի ու Զերդ Սրբության և վերըստին մաղթել Զեղ Զեր հնտագա հանրօգուա

ծանր, սակայն հաճելի աշխատանքներում նորանոր հաջողություններ:

Համբուղելով Օծյալիդ շնորհաբաշխ Ս. Աջը՝ հայցում ենք Զեր սրտաբուխ օրնությունը ինչպես բոլորին, այնպես և սփյուռքի մեր եղբայրների համար:

Բարի գալստյան այս սրտագին ողջունից հետո խոսեց Վեհափառ Հայրապետը, սփյուռքի հայրենակարութ հայ ժողովրդի եղբայրական ողջուններն ու սերը հաղորդելով Մայր Հայրենիքի իր եղբայրներին, ծանրացվ Մայր Աթոռի հայ կյանքում կատարած բարոյական-հոգեոր, ազգային-եկեղեցական մեծ գերի և միջազգային նշանակության մասին, պատմեց, թե ամեն տեղ, հայ թե սուար շրջանակներում գտնել է չերմագին, անկեղծ ընդունելություն, պատմեց արտասահմանում պիտական և եկեղեցական միանալոր գործիչների հետ իր ունեցած հանդիպումների մասին, և վերջում շնորհակալություն հայտնեց այս շատ չերմու սրտագին ընդունելության համար, «որուն կսպասեի անհամբեր», — ավելացրեց Վեհափառը գոհունակությամբ և ժապիտով:

Ապա նույն հանդիսավորությամբ դուրս դարձի կայարանի կառավարական ընդունելության սրահից Վեհափառ Հայրապետին ցնծագին չերմությամբ և ծափահարությամբ դիմավորեց կայարանի հրապարակում հավաքած բազմահաճար ժողովությամբ:

Վեհափառը օրհնելով բոլոր ներկաներին, նստավ ինքնաշարժ ու շքախմբով, պաշտոնական ինքնաշարժների ուղեկցությամբ մեկնեց գեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Ինքնաշարժների հանդիսավոր երթը անցավ Լենինի հրապարակով, Կառավարական տան առաջով Հաղթանակի կամուրջի վրայի և ուղղություն վերցրեց գեպի Էջմիածին: Հանապարհին մայրաբաղաքի ընակը լությունը չերմորեն ողջունում էր Վեհափառ Հայրապետին:

Պատմական Զվարթնոցի ժուտ արդեն լրսվում էին Վաղարշապատի եկեղեցիների զանկերի ուրախ զողանքները, մինչ մերենաները թիթեռներությամբ սուրում էին ծաղկած արտերի, այդիների, դաշտերի, գլուցառ առվակների միջով, Արարատի հավերժական և սիրաշատ նայվածքի տակ գեպի Էջմիածին:

Տոնականորեն զարդարված է դարավոր ու պատմական հայ ժողովրդի Մըրություն Մըրութ, կուսո խորան Ս. Էջմիածնի վանքը: Ամեն կողմ ծաղիկ, կամար և բարի գալուստի անկեղծ ու սրտաբաց խոսքեր:

Հինավորց վաճառքի արեւելան դարավախ առաջ, ուր կանգնել է մի գեղեցիկ կանաչապատ և ծաղկաշեն կամար, կանդ է առնում

ինքնաշարժների երկար շարանը, մինչ տոնական ցնծությամբ դողանչում են Մայր Տաճարի զանգերը և Արարատյան դաշտով մեկ ավետում Վեհափառ Հայրապետի վերաբարձի բարի ավետիսը: Վանքում հավաքվել է ուխտավորների, հավատացյանների մեծ բազմություն: շատերը եկել են հնու շրջաններից, գյուղերից, ողջունելու Վեհափառ Հայրապետին:

Արեւելան դարպասի առաջ կազմվում է Ավելացական հանդիսավոր թափոր: Վեհափառ Հայրապետը դ հստավորված՝ մտնում է Հայրապետական ամպհովանու տակ, որը տանում են Գերագույն Հոգեւոր Խորհրդի շրոս աշխարհական անդամները: Հնչում է «Հրաշափառ Աստուած» շարականը և խնիով ու աղոթքով, խաչով ու խաչվառով Մայր Տաճար է առաջնորդվում Վեհափառը: Լուս են մի պահ շարականներն ու աղոթքները... Վեհափառ Հայրապետը ծնրադիր Ս. Էջման սեղանի առաջ աղոթքում է մեր մեծ վարդապետների հոգով ու հավատով... Ուրախության արցունք կա Վեհափառի աշքերում:

Մայր Տաճարը լույսերի և վերջալուսի շուղերի տակ է: Տաճարը լին է ժողովրդի բազմությամբ: Սահակ սրբազնը բարի դալուս է մաղմում Վեհափառին: Բար լույսում է Տաճարում: «Փառ ոք քեզ, Աստուած, փառ ոք քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառ ոք քեզ», — հնչում է Վեհափառ Հայրապետի համատով և վստահությամբ լի ձայնը, Մայր Տաճարի կամարների տակ: Վեհափառը գոհություն է մատուցում Աստուածուն իր խաղաղ, անփորձ վերադարձի և ուղերության նպատակների բարեհաջողության համար, ապա խոսքն ուղղելով ժողովրդին առաջ:

«Արտասահման երբալս առաջ սուրբ սեղանի առջև ծունկ չունեցի, ուխտ կատարեցի, որ Աստված հաջողություն տա իմ ազգային-եկեղեցական գործերուն և ծրագրերուն, և այսօր կվերադառնամ իմ իդաեր կատարված, իմ ցանկությունը իրագործված, Աստուածու կամին համաձայն»: «Ուրախ լիր, Ս. Եկեղեցի», որովհետեւ ամեն տեղ, ուրիշ ես անցած, զատ սեր և նվիրում գեպի այս Ս. Տաճարը, գեպի Էջմիածինը, գեպի Ամենայն Հայոց Հայրապետությունը և գեպի մեր մայրենի հողը: Հայ ծոլովուրդը ուր ալ որ բլլի, իր նողիի ամբողջ չերմուրյամբ սիրած է, կսիրե և պիտի սիրե Ս. Էջմիածներ և աշխարհի վրա շկա ուժ մը, որ կարենա բաժենել, զատել մեր ծոլովուրդը Ս. Էջմիածնեն»:

Իր խոսքի վերջում Վեհափառ Հայրապետը հաղորդեց Սփյուռքի հայության չերմագին ողջունները Մայր Հայրենիքի եղ-



րայրներին, ավելացնելով, որ Սփյուռքի հայությունը կապված է մեր պանծալի Սովետական Հայրենիքի հետ, և խրատեց ժողովրդին ազոթել, որ մի երջանիկ օր, Սփյուռքի օտարության մեջ ապրող հայ ժողովրդի բնկորները հավաքվեն Մայր Հռովի վրա և աղոթեն այս Տաճարի մեջ բոլորը միացած, միասնական կամրջ էլ ավելի պայծառացնեն և հոգրացնեն Հայրենի երկրի կենառնակությունը և վերերը։ Շատերը արտասկում էին ուրախությունից, երբ Վեհափառը հաղորդում էր Սփյուռքի հայության ողջույններն ու սերը գեպի Մայր Հայրենիքը, Ս. Էջմիածինը։

Վեհափառի խոսքից հետո Մայր Տաճարի երգախումբը երգեց Ս. Էջմիածնի հավերժության և նրա արժանավոր Գահակալի կյանքի երկարության նվիրված հանրածանթ «Ամեն հայի սրտից բխած» հայրապետական գեղեցիկ մաղթերգը։

Ընդունելության եկեղեցական մասի պալարուից հետո Վեհափառ Հայրապետը նույն հանդիսությամբ և նույն կարգով առաջնորդիկ գեպի Վեհարան։ Մայր Տաճարից մինչև Վեհարան փոխի էին գորգեր, որի երկու կողմերին կանգնել էր բազմությունը ուրախությամբ, գոհումակությամբ, պատկանանուով։ Բոլորի սրտագին ցանկությունն էր մի անգամ ևս տեսնել Վեհափառ Հայրապետին։

Վեհարանի գլխաւոր մուտքի վրա կառուցվել էր մի գեղեցիկ ծաղկյա կամար՝ «Բարի գալուստ մեր սիրելի Վեհափառին» վերտառությամբ։

Վեհարանում Վեհափառ Հայրապետի «Պահանջ»-ով վերջացավ Վեհափառի վերագրածի ընդունելության արարողության առաջին մասը։

Երեկոյան ժամը 7-ն անց 30 բոպեին, Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը ի պատիվ Վեհափառ Հայրապետի վերագրածի Վեհարանում կազմակերպել էր ընդունելություն, որին ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի անդամները դիմավորությամբ խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանի, Մայր Աթոռի ողջ միարանությունը, Հոգևոր ծեմարանի դաստիարական կազմը, «Էջմիածն» ամսագրի խմբագրական մարմնը, վանքի պաշտոնելությունը։

Ի պատիվ Վեհափառի արված այս հանդիսավոր ճաշկերություն, առաջինը ողջույնի խոսք ասաց Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից պրոֆ.-դոկտ. Ա. Դարիբյանը։ Վեհափառին ողջունեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի անունից պ. Հ. Գրիգոր-

յանը, ծեմարանի դաստիարական կազմի և ուսանողության անունից՝ պ. Մ. Տեր-Մատենյանը, միարանության անունից գերանորդ Տ. Սահակ հպիսկոպոսը, բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Մատենյանը, Հոգեշնորդ Վահան և Հայրենիկ արեգաները, Վերստուպիլ Հանձնաժողովի անունից՝ պ. Գրիգոր Բերգեղյանը։ Մեջընդմեջ եղան մենաքնները ու խմբերգներ։

Ապա Վեհափառ Հայրապետը խորին շնորհակալություն հայտնեց Գերագույն Հոգեշնորդին, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահության, միարանության՝ այս շերմ գիմավորության համար։ Վեհափառ Հայրապետը հրապարակավ շնորհակալություն հայտնեց Հայրենի հարազատ կառավարության՝ արտասահման իր մեկնում՝ առթիվ ցուցաբերված պատրաստակամության և աշակցության համար և խնդրեց պ. Հ. Գրիգորյանից թարգմանը լինել իր երախտագիտական գգացմունքներին Հայրենի կառավարության ղեկավարների մոտ, ապա շարունակեց։

«Մեծ զոհուակուրյամբ պետք է նշեմ այսանի իմ հանդիպայումը ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահին ն. Ա. Բոլգանինին հետ, որ ինձ ընդունեց համականուով և դրական լուծում տվալ Հայ եկեղեցվո վերաբերյալ մեր ներկայացուցած շարք մը հացեցնեն։»

Ապա հանգամանորեն Վեհափառը խոսեց իր Սփյուռքում կատարած ուղևորության նպատակների և ծեռք բերված հաջողությունների մասին, Սփյուռքի հայության ակնկալությունների մասին Մայր Աթոռից, Հոգեշնորդի ծեմարանից Վեհափառ Հայրապետը հատկապես շեշտեց միարանության կազմը նորու գիտակից, կրթված ու կարգապահ և անձնուրաց միարաններով համալրելու անհրաժեշտության վրա, շեշտոր դնելով այդ հարցում Հոգեշնորդ ծեմարանի վրա դրված խոչոր ու պատասխանատու պարտականությունների վրա, ապա եղանակեց։

«Սփյուռքի հայությունը մեզ հետ է մտել, հոգով և մարմենով։ Ես այդ տեսա իմ աշերով իմ անցած բոլոր գաղութներու և թեմերու մեջ։ Ես յանգամաներ բոլորին վրա, Ամենայն Հայոց Կարողիկոսն սկսած մինչև վերջին աշխատավոր միարանը, սրբազն պարտ կղնե սրբությամբ կատարելու մեր պատրիք Մայր Աթոռին, մեր եկեղեցին և մեր Մայրենի եւրին նկատմամբ։ Մենք մեր բոլոր ուժերը, կարողությունները պատասխանատու պատականությունների վրա, պ. Հ. Գրիգորյանին դնելու համար իր փառակոր ու պատմական դերին մեջ, որ դա-

շեով անոր եղավ: Այս բանին հասնելու համար մեն ունինք բոլց տվյալները: Թող Տերը առաջնորդի մեզ եւ լույսով՝ հօգուս և ի շինուրյուն մեր Մայրենի նկեղեցվոյն և Ս. էջմիածնի»:

Վեհափառ Հայրապետի այս սրաւառու, նկեղեցաշին, Հայրինասիրական խոսքից դիմավորվեցին որութենգոսա ծափահարություններով: Այնակ, այն գործի մեջ, ուր կա հավատ, նվիրում, այնակ ամեն ինչ Հայոցությամբ կպահպի:

Թարերախտություն է այսօր բովանդակ Հայության, բովանդակ Հայաստանյայց Առաքելական նկեղեցու համար, որ կուսա-

վորչի Գաճի վրա բազմել է Վազգեն Ա. Հավատավոր, Հայրինասիր ու նկեղեցաներ Հովհաննեար, որի գաճակալությունը Մայր Աթոռի պատմության մեջ լինելու է Հայաստանյայց Առաքելական նկեղեցու տարեգության պայծառ և արդյունաշատ էջերից մեկը՝ «Էջմիածնի» ամսագրի խմբագրությունը ի սրան բարի գալուստ մազմելով ցանկանում է Վեհափառ Հայրապետին իշխանություն երկա՞ր ու երկա՞ր տարիներ հօգուտ մեր երկրի և մեր ծովովրդի:

«Թագաւոր Եւկնաւոր, զեկեղեցի բո Հայաստանյայց անշարժ պահեա:

